

Սուրբ Գրոց Սերտողութիւն : Դաս Թիւ 164

Դարձում – Աստուածաշունչը սահմանում է դարձումը որպէսզի դառնալ կամ մի վերադարձ՝ ուր մեղաւորը աստուածավախ տրտմութիւնից դառնում է իր մեղքերից Աստծուն եւ ապրում է Աստծուն նւիրած մի կեանք: Աւելի յատկապէս, դարձումը կարելի է սահմանել որպէսզի մեղաւորի իր մեղքերից ապաշխարելը եւ վստահելը Յիսուս Քրիստոսին փրկութեան համար: Ուստի, դարձումը բաղկացած է երկու տարրերից՝ ժխտական մասը որն է ապաշխարութիւն, եւ դրական մասը որն է հաւատք: Վերածնութեան մէջ մեղաւորը ամբողջովին կրաւորական է, իսկ դարձման մէջ նա թէ կրաւորական է եւ թէ գործունեայ: Մեղաւորը կրաւորական է այդ իմաստով որ Աստուած է դարձման հեղինակը՝ ուր նոյնիսկ ապաշխարութիւնը եւ հաւատքը Աստծոյ շնորհալի պարգեւներն են, Սուրբ Հոգով տնկւած մարդու սրտումը: Միայն Աստծոյ կատարած գործից յետոյ է որ մեղաւորը ապա աշխուժութեամբ եւ գիտակցաբար թողնում է իր հին կեանքը եւ դառնում է Աստծուն, սկսելով մի նոր կեանք (Եսայիա 55:7):

Հաւատք – Այսօրայ մշակոյթում հաւատք բառը նշանակում է մի անտրամաբանական (անխոհեմ) բանի կոյր հաւատքը: Երբեմն այդ խօսուում է որպէս «խաւարի մէջ եղած մի կոյր ցատկում», ակնարկելով մի բանի անիմաստ կամ զգացական հաւատքը որի դէմ են փաստերի մեծամասնութիւնը: Բայց այս չէ Աստուածաշնչի մէջ եղած «հաւատք» բառի նշանակութիւնը: Հակառակ անաստուածներին եւ կասկածներին, Քրիստոնէական հաւատքը մի «կոյր հաւատք» չի, հիմնուած առասպելների, սնահաւատութիւնների եւ հեքիաթների վրայ, այլ մի հաւատք է որը հիմնուած է պատմական եղելութիւնների եւ փաստերի վրայ (Ղուկաս 1:1-4, Բ. Պետրոս 1:16, Ա. Յովհաննէս 1:1-3):

Պարզեւ Աստծուց – Այդ հաւատքը որ փրկւածները ունեն իրենցից չի, մի բան չի որը ծագում է առել իրենց մտքերում կամ կամքերում, այլ այդ մի պարզեւ է Աստծուց, ուստի այդ մի շնորհք է: Այդ Սուրբ Հոգու մի գործ է, որը վերածնում է հոգեւորապէս մեռածին եւ ուստի կարողացնում է նրանց հաւատալ Քրիստոսին եւ փրկել: Եփեսացիս 2:8-9-ում Պողոսը ասում է թէ նոյնիսկ հաւատքը «Աստծոյ պարգեւն է. Ոչ թէ գործերից, որ մէկը չպարծենայ» (Փիլիպպեցիս 1:29): Սուրբ Գիրքը նաեւ յատկօրէն ուսուցանում է թէ հաւատքն ու միմիայն հաւատքն է փրկութեան հարկաւոր պայմանը, կամ աստուածաբանական լեզուով միայն հաւատքն է արդարացման միջոցային պատճառը կամ միջոցը: Մեղաւորը փրկում է միայն հաւատքով, ու ոչ հաւատքով եւ գործերով: Այս պարփակւած է «Միայն Հաւատք» Վերակազմ արտայայտութիւնով (Գործք Առաքելոց 16:31, Հռովմայեցիս 3:28, 9:32, 10:13, Գաղատացիս 2:16, Փիլիպպեցիս 3:9, Բ. Տիմոթէոս 3:15):

Ընտրեալներին տրւած – Աստուած չի տալիս այս հաւատքի պարգեւը բոլորին, այլ միայն ընտրեալներին: Հաւատքը վերածնութեան պտուղն է: Այն անձը ում Սուրբ Հոգին կոչում է ներքնապէս եւ վերածնում է նա անպայման կ'հաւատալ Քրիստոսին եւ կ'փրկուի (Յովհաննէս 6:37, Գործք Առաքելոց 13:48): Մի կարեւոր կէտ որը հարկ է մեզ այստեղ հասկանալ այդ է որ թէկուզ այս հաւատքը մի պարզեւ է Աստծուց ներգործւած մեր մէջ, եւ թէկուզ այս հաւատքը մեզանից չէ, սակայն այդ մեր հաւատքն է ու ոչ ուրիշ մէկի՝ այսինքն երբ մենք վերածնում ենք եւ ստանում ենք այս հաւատքի պարգեւը, մենք ենք որ ապա գործադրում ենք այդ հաւատքը եւ հաւատում ենք Քրիստոսին: Աստուած չի՝ հաւատում մեզի համար կամ մեր տեղը:

Խօսքի միջոցով – Թէպէտ վերածնութիւնը Սուրբ Հոգու գերբնական գործունէութիւնն է ուղղակիօրէն կատարւած մեղաւորի մէջ՝ առանց որեւէ միջոցների օգտագործման, սակայն դարձումի մէջ, հաւատքի սերմը տնկւած, Սուրբ Հոգին գործածում է Աստծոյ Խօսքը որպէս շնորհքի մի արտաքին եւ սովորական միջոց որպէսզի յանդիմանել մեղաւորին իր մեղաւոր վիճակի վերաբերեալ ու նրան ներկայացնել Քրիստոսով եղած փրկութեան ճանապարհը, եւ ուստի ազդեցիկ դարձնել այդ փրկութեան համար (Հռովմայեցիս 10:13-17):

Վերակազմ աստուածաբանութեան մէջ Աստծոյ Խօսքը ակնարկում է որպէս շնորհքի մի «արտաքին» միջոց, տարբեր Սուրբ Հոգու «ներքին» գործից, քանի որ ոչ բոլոր նրանք որ լսում են աւետիսը փրկում են, բայց միայն նրանք որոնց Հոգին ներքնապէս վերածնում է: Նաեւ Աստծոյ Խօսքը կոչում է որպէս շնորհքի մի «սովորական» միջոց, որովհետեւ սովորական դէպքերում Սուրբ Հոգին գործածում է ուղեկցում է Խօսքը ընտրեալի փրկութեան համար: Ուստի ինչպէս պատուիրւած Աստծուց, խիստ կարեւոր է մեզի հաւատացեալների համար որ հռչակել Աստծոյ Խօսքը լիովին եւ ճշգրտօրէն՝ քարոզութեան, ուսուցչութեան, եւ աւետարանչութեան միջոցով, վստահելով թէ Սուրբ Հոգին փրկութեան կ'բերի Իր ընտրեալներին (Մատթէոս 28:18-20, Գործք Առաքելոց 10:42-43, Հռովմայեցիս 1:15-16, Ա. Կորնթացիս 1:17-21, Բ. Տիմոթէոս 4:1-2): Յատուկ պարագաներում՝ ինչպէս մանուկները որ մեռնում են մանկութեան հասակում կամ նրանք որ մտքով վնասուած են եւ ուստի անկարող են աւետիսը հասկանալու, Սուրբ Հոգին կարելի է փրկել մարդկանց միմիայն Իր ներքին Խօսքով, առանցի որեւէ արտաքին միջոցների գործածութեամբ (Ուէստմինստրը Հաւատոյ Հանգանակ, Գլուխ 10, Բաժին 3):